ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«16» հոկտեմբերի 2023թ. № 1074-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԹԻՎ 836-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 12-ի «Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը, ինչպես նաև հարցազրույցի հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 836-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Հրամանի նախաբանում «Մաքսային ծառայության մասին» բառերից առաջ լրացնել ««Հարկային ծառայության մասին» օրենքի 17.3-րդ հոդվածի և» բառերը, իսկ «մասը» բառը փոխարինել «մասերը» բառով,

2) Հրամանի վերնագրում, տեքստում և հավելվածներում «մաքսային» բառից առաջ լրացնել «հարկային կամ» բառերը,

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

3) Հրամանի 1-ին կետով հաստատվող Հավելված 1-ի Ձև 1-ում «Մաքսային ծառայության մասին» բառերից առաջ լրացնել ««Հարկային ծառայության մասին» կամ» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

10/16/2023

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731 ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ